



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

S. H. ...

ԱՂԵԻԻՐԻ 1892 թ. V ԸՆԺԱՆ

ՅԻԼԵՐ

ՖՐԻԲՈՒԼԻՆ

ՐԱՓՓԻ

1892

158.

ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

№		Թ.	Կ.
1.	„Աղբիւր“ 84 Թ.	.	3 —
2.	„ ” 87 ”	.	3 —
3.	„ ” 83 ”	.	10 —
4.	„ ” 85 ”	.	10 —
5.	„ ” 86 ”	.	10 —
6.	„ ” 88 ”	.	4 —
7.	„ ” 89 ”	.	3 —
8.	„ ” 90 ”	.	3 —
9.	Տարագ 90 3 ռ. և 91 Թ.	.	6 —
10.	Փայտաշէն յերմից սպիտակ տունը. պատկ.	.	60
11.	Հսկայ մրջիռն, սրտ.	.	40
12.	Ժան Բատ. Լիւրի մանկ.	.	10
13.	Ռսկ անիկ, Պորչիկն	.	30
14.	„ II սերիս	.	5
15.	Մշակած և անմշակ ծառիկեանքը	.	30
16.	Չար. Արամի արկած.	.	50
17.	Ֆրիտեօֆ դիւր. (պատկ.)	.	40
18.	Բնար խօսնակ	.	50
19.	Պօզնանի ուսուցչի օրագ.	.	20
20.	Ա. Իօյկ. Երկու մանրավեպ	.	15
21.	Անդերսէն, Սոխակ և Խոզարած	.	15
22.	Դիկեան, Հարս և անլու.	.	15
23.	Գրողիկ-Կրն. սրբնիւնը	.	25
24.	Երեխաները և նրանց բարեկամները	.	40
25.	Գ. Արայեան, Արեւնազան	.	40
26.	Տոբ Անգոն և Հայկանուշ գեղեցիկ	.	40
27.	Տիգօ, Գալի աղաթներու	.	1 —
28.	Ա. Մ. Ե. Պ. Ճաշակ (ընտիր բանաստ.)	.	25
29.	Ե. Տ.-Անտիլեան, Տեղագրական անմականի	.	30
30.	Օրացոյց մեծադիր սրտակերպարոյ 90 Թ.ի	.	30

ԱՂԵԻԻՐԻ 1892 թ. V ԲՆԺԱՆ

Շ Ի Լ Լ Ե Բ

Ֆ Բ Ի Դ Ո Լ Ի Ն

A I
13448



ԹԱՐԳ.



ՏՊԱՐԱՆ «ԱՐՈՐ» Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ

Բարևատին. փողոց

1891

Дозв. Ценз. Тифлисъ, 11-го ноября 1861 года.

Тип. Ароръ Т. Я. Назарьянцъ. Барятинская улица.

Է Ձ Դ

Դոյզն այս նշխարս ի մուսցուածոյ գրաւոր երկոց յետ փոխելոյ յանանց կեանս հայրենանուէր յոգնահոչակ մատենագրի՝ Բաֆֆի, արդ ի լոյս ածելով, առաջի անենմք մատաղերամ՝ ընթերցասէր մանկտւոյ մերոյս հանդիսի, զի եւ նորա զհետ օրինակի մեծավաստակ հեղինակիս ընթանալով՝ զուն գործիցեն ջանասիրաբար ի վարժրս յուսման գրոց ոսկեղինիկ լեզուիս մերոյ, որ է զանձ անհատների եւ անզուգական կրթիչ վասն նորաբողբոջ աշխարհիկ քառքառոյ, այլ եւ սնուցիչ եւ զօրացուցիչ է փափագանսց սրտի ըստ հայրենականին ասեմ՝ ըղձից, եւ եթէ ըստ հոգւոյ ըսրեմասնութեանց:

Ք Ր Ի Դ Ո Լ Ի Ն

ԴՈՐԾ ՇԻՎԼԵՐԻ ԴԵՐՄԱՆԱՅԻՈՅ

ԽԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ՌՈՒԾԱՆ ԼԵՂՈՒԷ



Քրիզոլին, սրտանի լի շնորհօք և հա-
ւատարմութեամբ, էր սպասաւոր ոմն, սնեալ
լերկիւղն Աստուծոյ և ի վարս առաքինականս
ի ձեռն տիրուհւոյ իւրոյ՝ Դքսուհւոյն Սավերնս-
կիոյ: Ազնուահոգին այս կին ցայնչափ բարե-
սիրտ էր և հեզ, մինչ անկարելի էր չը լարգել
զնա: Ոչք վտան և մանկահասակ սենեկասլետն
ի սպասու կայր նմա, և ծառայէր ամենայն
մտերմութեամբ սկսեալ լառաջին ճառագայթից
արեգական մինչ ցխորին գիշեր, և դեռ ևս հա-
մարէր, թէ ոչ իսպառ կատարեաց զպաշտօն
իւր: Ընդգէմ խղճի գտանէր Դքսուհին տեսա-
նել զայսչափ ճգնութիւնս նորահաս սրտան-
ւոյն, և երբ լի մայրական գթով ասէր ցնա.

„Բաւէ, Ֆրիդովին, զնա, հանգստացիր, — լայն-
միկ ըօպէի աչք խղճուկ երիտասարդին լնուին
արտասուօք, և նա փարեալ զոտիւք տիկնոջ
իւրոյ, խնդրէր մի զրկել զնա ի սպասաւորու-
թենէ, որ այնքան հաճելի էր նմա, քանզի
կեայն առանց գործոյ՝ համարէր նա մեղանչել
ընդդէմ պարտաւորութեանց:

Տեսեալ զայսպիսի բարեմասնութիւնս Ֆրի-
դովինի, Դքսուհին ազնուամիտ ոչ հայէր ի նա
որպէս ընդ ծառայ ոք, այլ սէր որդիական
տաճէր ի սրտի իւրում, զովասանէր միշտ զնա
առաջի բարեկամաց իւրոց, և լիաձեռն պար-
զեօք վարձատրէր զնորայն անձնագոհութիւն:

Ս.յսպիսի գթութիւնք դքսուհւոյն առ մա-
նուկն Ֆրիդովին յարուցին ի սրտի որսորդին
Ռօբերտի թունաւոր իմն ատելութիւն, և լի չա-
բութեամբ զրգռեցին զնախանձ նորա առ բա-
րեբախտ սենեկապետն, որով յընթացս գոյզն
ինչ ժամանակի վառեցաւ հողի նորա չարաչար
դաւադրութեամբ:

Բօրերտ էր մի ի պաշտօնակցաց Ֆրիդոլինի զինակիր գքսին Սավերնսկիոյ, և յար սրսակից ընդ նմա: Ս.ռ ի կստար ածել զգաւածանութիւն իւր, նա յաւուր միում ել ընդ առաջ գքսին, մինչդեռ գառնայր նա յորսորդութենէ: Եւ մերձեցաւ առ նա խաբէբայ գիմօք, որպէս սատանայ առ միամիտ ամն, երկիր եպագ, և կեղծ ու պատիր բանիւք սկիզբն արար պատմել զամբաստանութիւն իւր, որպէս թէ գքսուհւոյն էին անվայելուչ յարարերութիւնք ընդ սիրելուոյն իւրոյ սէննկապետի: Թէև սուտ էին բանքն, բայց այնպիսի իմն ճարտարութեամբ յարմարեաց չարագործն, զոր գծոխային հոգի նորա միայն զօրէր հնարել: Իբրև ետես նենգաւորն, թէ յաջողեցաւ նմա, ուրախ սրտիւ մեկնեցաւ ի գքսէն, հեղուվ զթոյն վրէժխնդրութեան ի հոգւոջ նորա:

Արամտութիւն և կատաղի բարկութիւն պաշարեցին զգուքսն ի սկզբան իսկ, երբ սակաւ առ սակաւ մեղմացան վրդովմունք սրտի նորա. ընդ երկար նա աշխատ լինէր մերժել

լինքենէ զգառն մտածութիւնս, զոր եմոյժ ի նմա չարագործն:

Նա գուն գործէր կրկին արդարացուցանել զսենեկապետն բարեսիրտ և ի մոռացօնս տալ զոր լուան, բայց ոչ կարէր: Քանզի այնպիսի իմն խորամանկութեամբ հնարեալ էր բանասարկուն զամբաստանութիւն իւր, մինչ իսպառ հաւանական թուէին առողջալքն:

Կուքսն, ընկզմեալ ի փոթորկի խռովութեան սրտի իւրոյ, բնաւ ոչ ետես զմեկնիլն Ռօբերտի, ապա յանկարծ սթափեալ որպէս ի խորին քնոյ, նա էարկ շուրջ զիւրեաւ զսոսկալի հայեցուածս, և կատաղութեամբ, որ շողշողէր յաչս նորա, յարձակեցաւ ձիով իւրով, և հանգոյն կայծական սլացաւ ի խոր անդր մերձակալ անտառին:

ԶՈՒՎԱՐՍՆ.

Ընդ մէջ անտառախիտ բլրոյ ձգի ճանապարհ մի մթին, յատակեալ կղկղանօք չորացեալ

տղմոց, պատճառելոց ի ծանր անույ շարժմանէ սալլակաց, որք ճեղքելով զթանձր փոշին, անդադար յաճախեն ընդ այն ուղի, կրելով զանագան մետաղս ի քաղաքէ ի ձուլարանն:

Անցանելով զայն ճանապարհ, առաջի աչաց ուղեւորին հանդիսանայ Թաւր տեսարան շինուածոց, կառուցելոց յառանձնութեան անդր նսեմաստուեր անտառին: Ի միջի նոցա ամբռնան բարձր ծխնելոյզք, որք զօրէն գագաթանց հրաբուխ լերանց ժայթքեն զծուխ, զմոխիր և զբոց, որ լուսաւորէ զխաւար գիշերային մթութեան հանգոյն սոսկալի ճառագայթից հրդեհի: Այսպէս էր գործատունն ձուլարանի: Հուրն անշէջ մնայ անդ զգիշեր և զցերեկ, բորբոքեալ միշտ անխոնջ ձեռօք դարբնոց, որոնց դէմք սոսկալիք, սեւացեալք ի ծխոց և ի մոխրոց, բերեն զնմանութիւն անգնդախոր բնակչաց դեհենին:

Ի ձուլարանի անդ զօրութիւն հրոյ և ջրոյ՝ գործէ միասին: Ի նմա կայծք Թաւրն ընդ ամենայն կողմանս, փուքք տատանին, որպէս

Թէ, կամէին փոխարկել զժայռս յապակի: Անիւն ջրադաջի, որ շրջի զօրութեամբ ջրոյ, հոլովի անդադար, և աղմկալի թևք նորա բաղխին անդուլ զցայդ և զցերեկ: Իսկ ի միջի խուլ ձայնից և ընդհանուր շփոթութեան լսելի լինին բոմ բիւնք ծանր կռանահարութեանց, որք փոփոխակի ել և էջ առնեն ի վերայ շիկացեալ երկաթոյ, առ ի սախլել զնա ընդունել զսլարտ ուսլատշած ձևն:

Չուլարանն էր սեպհականութիւն դքսին Սավերնսկիոյ և գտանէր յայնմիկ անտառի, յորում եմուտ նա: Իբրև նա եհաս անդ, ետես զերկուս թխագոյն դարբինս, որք նման էին առաւել դիւաց, քան թէ մարդկան: Ի ուքսն կոչեաց զնոսա առ ինքն և սլատուէր ետ. «Չառաջինն, զոր ես առաքեցից աստ, և որ ասիցէ ձեզ. — կատարիցեմք զհրաման տեառն իմոյ, — զուք կալարուք և յայնմ իսկ ըսպէի արկէք ի հուր, զի նա ալքեսցի և ես միւս անգամ ոչ տեսից զնա»:

Իբրև լուան նոքա զզարհուրելի հրաման
 դքսին, ուրախացան յուրախութիւն մեծ: Ի ծափ
 հարկանէին ճիւղաղբն և ընդոստնուին բազում
 հրճուանօք, յոյժ գոհ եղեալ զյաջող դիպուածոյն,
 որ թոյլ աալր նոցա առնել զչարագործութիւն
 առանց ինչ պատժոյ: Քանզի այսօքիկ հրէշք
 մարդկայինք միշտ շուտափոյթ են յեզեռնա-
 գործութիւն և դանդաղ ի բարիս: Յայնժամ
 նոքա վագեէին առ հնոցն և օգնութեամբ փքսին
 լաւելին ի նմա զջերմութիւն սաստիկ, և պատ-
 րաստեցին զհուրն ի սպանութիւն զոհին և
 դատասարտելոյն ի մահ:

Իսկ Ռօբերտ իբրև ետես զազդեցութիւն
 խաբեբայ չարախօսութեան իւրոյ, սրով բոր-
 բոքեաց ի դուքսն հուր սրտմտութեան, նա
 ընդերկայն կացեալ ի թագստեան արևի, զադ-
 տագողի հետազօտէր զընթացս դքսին, մինչև
 եմուտ նա յանասուն: Յայնժամ փարատե-
 ցաւ երկմտութիւն որսորդին, և նա ի հաւաս-
 ախ կալր, թէ դուքսն դնաց ի ձուլարանն,
 տալ անդ զգատակնիք մահու մատաղ սենեկա-

պետին: Կեղծաւորն առանց ժամավաճառ ինչ լինելոյ, լետս ընդ կրօնկս դարձաւ ի զղեակն Սավերնակիոյ, որոնել զՖրիդոլին և սղղել զգնացս նորա ընդ մուտս թակարգին սահմանելոյ լիւրմէ:

Նա եգիտ զսենեկասլետն առ դրունս ամբողին, մէրձեցաւ, ասէ իւրով սովորական քաղցր բարբառովն. — «սիրելիդ իմ Ֆրիդոլին, վաղվաղեան, զի լսչամ իսկ ժամու տէրն մեր խնդրէ զքեզ: Ահաւասիկ նա գնայ ընդ այս ճանապարհ, որ ի ձուլարանն տանէ, փութե՛՛ առ նա»:

Ֆրիդոլին, միշտ պատրաստ զուով կատարել զկամս տեսրց իւրոց, ի քթթել ական վազեաց ընդ առաջ դքսին: Կուքսն տեսեալ զնա, ասէ. — «Գնա՛, Ֆրիդոլին, փութով ի ձուլարանն, և հորց ի դարբնաց՝ կատարեցին արդեօք նոքա զհրաման իմ: Պատասխանի եւ Ֆրիդոլին. — Յօժարութեամբ տէր իմ»:

Ապա նա գնայր ի ձուլարանն:

Իսկ Րօբերտ որ ի հեռուստ դիտէր զայս ամենայն, ցնծայր ի միտս իւր և ոչ կարէր պահել զինքն ի բռնութենէ կրից, որով լի էր հոգի նորա: Աւրախութիւն նորա բազմանայր հետըզհետէ, երբ զմտաւ ածէր, թէ վերջին ժամն էր, յորում տեսանէ զառարկայն սխալալութեան իւրոյ զմտազսե՛նեկապետն, և թէ նա փութով վճարելուց է զառ ժամանակեայն իւր զկեանս՝ դժնդակ և անիրաւ մահուամբ:

Իսկ անմեղն ֆրիդոլին գնայր ընդ ուղին, որ ի ձուլարանն տանէր: Սիրտ ազնիւ սլատանուոյն էր անգորր և գոհ: Նա երջանիկ համարէր զինքն, որ կարողացաւ ցուցանել տեսան իւրում զնոր ապացոյց սիրոյ և խոնարհութեան կատարելով զհրաման նորա: Նա գնայր մեղմ և հանդարտ կերպիւ, շնչելով զպայծառութիւն դաշտային օդոց: Յանկարծ խորհուրդ ինչ կասեցոյց զնա ի ճանապահէն. մտաբերեաց զգրքսուհին: «Ո՛հ, մարթէ նա ևս ունի ինչ հրամայել ինձ,»: Նա դարձաւ յետս և եկաց առաջի դքսուհւոյն, ասելով. — «Տէրն իմ առաքէ զիս ի ձուլարանն, չունի՞ք ինչ հրամայել»: »

Պատասխանի ետ դքսուհին հեզութեամբ. —

„Ես մեծաւ ուրախութեամբ դնալոց եմ սոյսօր յեկեղեցի, տեսանել զսուրբ պատարագ, եթէ ոչ արգել լինէր այնմ հիւանդութիւն սիրելի զաւակիս. դնա՛ դու յեկեղեցի, որդեակ իմ, և իմ փոխարէն մատո՛ զջերմեռանդն աղօթս, մաղթեա՛ առողջութիւն զաւակիս, գուցէ լուիցէ Տէր զխնդրուածս քո և ցուցցէ ինձ ողորմութիւն„ :

Փրիդոլին, ուրախացեալ այսու սուաջարթեամբ, ել ի սենեկէ դքսուհւոյն, և սկսաւ նախ զիմել յեկեղեցին: Դեռ ևս չէր նա հասեալ ի ծայր շինին, յորժամ լուաւ զձայն գիւղական զանգակին, որոյ հնչիւնք քաղցրալուրք հրաւիրէին զհաւատացեալս լաստուածալաշտութիւն: „Չէ պարտ խորշել յԱստուծոյ, յորժամ նա կանգնեալ կայ առ ճանապարհաւ քով, — ասաց ի սրտի իւրում պատանին և եմուտ ի փոքրիկ եկեղեցին: Անդ տիրէր խորին լուութիւն և տաճարն Աստուծոյ թափուր կայր ի մարդկանէ, քանզի էր ժամանակ հնձոց: Տապն

արեգական կիզոյր ի դաշտի զմշակն աշխատասէր, որ ժողովէր զարդիւնս իւրոց քրտնաջան վաստակոց: Չև ևս էր եկեալ և գիւղական քահանայն. միայն յանկեան ուրեք ի ծունր իջեալ աղօթէր մուրացիկ ոք, առ որ մերձեցեալ ետ սլատանին զյետին արծաթեայ գրամն, զոր ունէր առ ինքն: Աղքատն խաչակնքեալ գերեսս իւր խնդրէր զկենաց բարեբախտութիւն այնմ, որոյ բարերար ձեռն օգնեաց նմա: Ծերունիս այս յառաջ էր երկրագործ յոյժ աշխատասէր, իսկ յեօթանասներորդ տարւոջ հասակի իւրոյ նա կորոյս զոյս աչաց, և ընդ նմին զրկեալ ի գործելոյ: Սա էր մի ևեթ մուրացիկ ի համայն շինին, և իւրաքանչիւր գիւղացի համարէր առանձին իմն պարտաւորութիւն օգնել նմա:

Ժողովուրդ փոքր առ փոքր սկսաւ զուժարել, ի վերջ ամենայնի քահանայն եմուտ յեկեղեցին, բայց ոչ ոք էր, որ սպասաւորէր նմա: Կամ եղև Փրիդոլինի յանձն առնուլ զայս պաշտօն, զի խորհէր նա ի միտս իւր. „Չէ պարտ մերժել զայն, զոր հրամայեն Երկինք“: Ոյր վասն


նա մատուցանէր քահանային զհարկաւորեալ զգեստսն և պատրաստէր մեծաւ ջերմեռանդութեամբ զսպասս ի վերայ սեղանոյ:

Յորժամ ամենայն ինչ պատրաստ էր, որպէս պաշտօնեայ սուրբ սեղանոյ, նա մերձեցաւ առ քահանայն, ել ի բեմն: Նորահաս սենեկապետն, կալեալ զգիրս ի ձեռին, ի ծուներ իջանէր անդադար մերթ յաջակողմն և մերթ յահեկակողմն, որպէս օրէն է առնել ի ժամուաստուածպաշտութեան: Եւ ընդ դուրն ինչ նշան քահանային, յորժամ լսելի լինէին բանք „Սուրբ, Սուրբ (Sanctus),“ նա ընդ իւրաքանչիւր ձայնս երկոցս հարկանէր զգանգակն և երկիրպագանէր: Իսկ յորժամ քահանայն ի ծուներ էջ ջերմեռանդութեամբ սռաջի սեղանոյն, և ապա դարձուցեալ զերեսս իւր ընդ ժողովուրդն, ամբարձ զձեռս առ Աստուած, կոչելով զնա իջանել ի վերայ հանդիսականաց, — յայնժամ պաշտօնեայն առաքինի մատեաւ առ նա և ի ձայն փոքրիկ գանգակին ծանուցանէր զմեծահանդէս ըսպէն: Յայնմ խորհրդական ժամու՝ զիւղացիք բարե-

պաշտք և կանայք նոցա անկանէին ի վերայ
երեսաց իւրեանց, կոծէին զլանջս, և լի ջեր-
ժեռանդութեամբ խաչակնքէին զերեսս իւրեանց:

Այնպէս թուէր փրիզովինի, թէ նա ի վա-
ղուց անտի գիտէր զամենայն պաշտամունս զե-
կեղեցականս, և իրաւ, նա ոչ իւրք սխալեցաւ
ցլտխճան պատարագին: Իսկ երբ քահանայն կար-
գաց զվերջին. «Տէր ընդ ձեզ» (Dominus volis com)
— և դարձուցեալ զերեսս ընդ ժողովուրդն, օրհ-
նեաց զնոսս, յայնժամ մատաղ սպասաւորն եգ
զիւրաքանչիւր անօթն յառաջին տեղուջ, սըր-
բեաց գտածարն, և սպա ել ընդ արտաքս լե-
կեղեցույ: Եւ յանդորրութեան արթուն խզճի
իւրոյ, կատարելով զպատուէր դքսուհւոյն, ա-
պա փութայր նա ի ձուլարանն օրհասական,
կատարել զհրաման դքսին, անդադար կրկնելով
ի միտս իւր զմաղթանսն «Տէր հայր» (Pater):

A 13448



«Որ փորէ զխորհորատ ընկերի իւրում; անկ-
ցի ինքն ի նոյն»:

Սակայն զինչ անցք անցանէին արդեօք
ի դղեկին Սավերնսկի, ուր թողաք զդուքսն լի
կատաղութեամբ և զ՛օրբերտ ի հրճուանս ու-
րախութեան, որ համարէր զինքն հասեալ ի
ծայր ամենայն երջանկութեանց, արբուցանե-
լով զծարաւ անողորմ սրտի իւրոյ մահուամբ
անմեղ Փրիդոլինի: Բայց Յրիդոլին, որպէս յայտ-
նի է մեզ, ընկալեալ զհրաման դքսին դիմել ի
ձուլարանն, ասլա ստացաւ ի դքսուհւոյն դալ
ևս պատուէր, այսինքն գնալ լեկեղեցի:

Դուքսն Սավերնսկի չէր չարասիրտ ի բնէ,
այլ էր դիւրաբորբոք: Դուզն ինչ ընդդիմարա-
նութիւն փոխէր զվիճակ սրտի նորա ի վատն.
դուզն ինչ հակառակութիւն ընդդէմ կամաց
նորա, զայրացուցանէր զնա: Այլ տեղի տուեալ
սրտմտութեան, մարթէ լինել անիրաւ, մարթէ
գործել զամենայն չարիս, քանզի առողջ բա-

նականութիւնն այլ ևս ոչ իշխէ գործոց մերոց: Այր բարկասիրտ նոյնպէս անմիտ է, նույպէս գազանաբարոյ է, որպէս և այր արբեցող, թէ և երկոքին ևս այլ և այլ ճանապարհաւ կորուսանեն զգորութիւն խոհեմութեան իւրեանց:

Ի ուքսն Սամերնսկի, հաւատացեալ ամբաստանութեան չարագործին Րօբերտի, գրաւեցաւ անխոհեմ սրտմտութեամբ: Նա եղև խաղալիկ ի ձեռն տարտարոսական ճիւղին, որ հրապուրեաց զնա կատարել զսոսկալի եղեռնագործութիւնն, դատապարտելով զանմեղն Փրիզովին ի բոց հնոցին: Այր վասն զչարեալ նորա, դիմէր մեծաքալլ լամբոյն իւր, ստէպ ծեծելով զճակատն, և ցուցանելով զանհամբերութիւն խառն ընդ յուսահատութեան ի դէմս իւր: Խիղճն ի ներքուստ հալէր մաշէր զսիրտ զղջացելոյն, և դատապարտելով ի մահ զՓրիզովին, նա համարէր, թէ մեղաւ չարաչար ընդդէմ ճշմարտութեան: Առաջի աչաց նորա երևութանայր ուրուականն անմեղին, և նա տեսանէր, թէ որպէս ի բոցս անդ հնոցին խղճալի սենե-

կապեան ձեռամբարձ լերկինս բողոքէր ընդդէմ
բարբարոսութեան տեառն իւրոյ:

Իսկ Րօբերտ բոլորովին այլ ազգ խորհէր.
Նա խնդայր, բերկրէր ընդ մահ փրկողինի: Նա-
խանձ նորա տանջէր զինքն, վասն որոյ թայլ
ետ կամաց իւրոց անձնատուր լինել այսպիսում
զգուելի մոլորութեան, որ առնէ զմարդն անի-
բաւ: Նա գտանէր զմխիթարութիւն որտին ի
տանջանս զոհին, որ էր առարկայ անգութ ա-
տելութեան նորա: Եւ այսպէս առանց ինչ
խղճահարութեան խնդայր նա յուրախութիւն
տաժանական, որ իւրեան միայնոյ էր սեպհա-
կան: Ո՛րպիսի քաղցր և ախորժելի տեսարանս
յանդիման կացուցանէր նմա երևակայութիւն
իւր, յորժամ զմտաւ ածէր, թէ սրպէս Ֆրիդո-
լին մերձենայր ի ձուլարանն, ինչպիսի կատա-
ղութեամբ դարբինքն վայրենիք յափշտակելոց
էին զնա, և սրպէս ջախջախել ունէին զանդամս
վափուկ պատանեկին, կաշկանդելով զնա միով
ճնշմամբ կոպիտ ձեռաց իւրեանց... Երեւակայէր
նաև զսոսկումն և զզարհուրանս փրկողինի և
ասլա զմահաութ տանջանս նորա ի հնոցին:

Ահա այսպիսի մարդաստանական իմն բարկութեամբ դիմէր եղեռնագործն ի ձուլարանն կոյս, տեսանել զչարչարանս մանկանն: Եւ ի բորբոքմանէ վայրենի կրից իւրոյ, ամսոսայր զի մահ Փրիզովինի տալոց էր վախճան զուարճութեան իւրոյ, քանզի կամէր, զի չարչարանք Փրիզովինի շարունակեսցին և զկնի մահուան նորա: Աւրախութիւն նորա այլ ևս ոչ գտանէր զչազուրդ իւր, յորժամ համարէր զսրտտանին փոխարկեալ ի մոխիր, և այնպիսի մոխիր, ընդդէմ որոյ նա չէր կարող առնել չարութիւն ինչ...

Այսպէս անցանէր ժամանակն:

Դուքսն ի գղեկին ստատէր սոսկալի լրոյ ինչ ի ձուլարանէն, յորժամ Փրիզովին աղօթս մատուցանէր լեկեղեղոջ, իսկ Ռօբերտ հրճուէր ի ցնորս երեւակայութեան իւրոյ: Բայց հրէշն այն աղմկեալ կայր զօրութեամբ չար սգւոյ միոյ: Նա այլևս ոչ զօրէր զկայ առնուլ, կամ զսագարել ի տեղոջ ուրեք. անհամբերութիւն նորա էր ի մեծի աստիճանի: Այն, նա զիտէր

զանմեղ արիւն Ֆրիդոլինի, և այդ իսկ պատ-
 ճառէր ցաւ սրտի նորա: Եւ թէպէտ նա չետես
 զմտանելն նորա առ դքսուհին, սակայն ոչ երկ-
 մտէր, թէ Ֆրիդոլին անցուցանէր զժամանակն
 զայն յաղօթս լեկեղեցւոջ. զի յայտնի էին նմա
 բարեպաշտական զգացմունք պատանեկին: Եւ
 թէև նա անցաւ հուպ առ եկեղեցեաւ, բայց
 ոչ եմուտ ի նա, զի ի բնէ անսովոր էր յայտմ
 իրի: Սիրտ և մտածութիւնք նորա համանգա-
 մայն յափշտակեալ կային առ ի ձուլարանն ու-
 րախառիթ, ուր ակն ունէր գտանել զբաղձա-
 լին հոգւոյ իւրոյ: Եւ այսպէս, զննելով զամե-
 նայն բաց ի յայտանէ, զոր Աստուած կամե-
 ցաւ թագուցանել, նա լաւ համարեցաւ գնալ
 ուղղակի ի դարբնոցն, զիտել զճշմարիտն և
 յայտնել զայնմանէ դքսին:

Անցանելով զանտառապատ ուղին, նա ե-
 տես զծուխն, որ ելանէր, դիզանայր ի ծխնե-
 լուզից դարբնոցին: Սիրտ նորա թնդաց ի բուռն
 յորձանաց ցնծութեան և հազիւ նա զօրէր ոգի
 առնուլ: Հուսկ լետոյ տեսանէ զերկուս մրտեալ

դարբինս առ դրան ձուլարանին, և ձայն տալ նոցա. — բարեկամք, կատարեցիք արդեօք զհրաման տեսուն իմոյ :

Երկոքին հրէշքն հայեցան ի նա ժպիտ ի դէմս կրելով, և գնացին թագուցանել զուարճութիւն իւրեանց: Յորժամ Րօբերտ մերձեցաւ առ նոսա և կրկնեաց զհարցն. — „Սօացէք, ինդրեմ, բարեկամք, կատարեցիք զհրաման Տեսուն իմոյ: Այն ինչ երկոքին աւագակքն, վատք և ս քան զվայրենի գազանս, տեսին զՐօբերտ առ դրան զարբնոցին, երկուստեքէ յարձակեցան ի վերայ նորա և կալան գնա: Հեղձամղձուկ առնէին զնա ուժգին ձեռօք իւրեանց, սովորեալք միշտ կորացուցանել և բեկանել զերկաթ, և ածէին այնպէս առ հնոցն: Որքան և զոչէր, որքան և աղաղակ բառնայր Րօբերտ, ոչ կարէր արտայայտել զմիտս իւր: Սոսկումն և ապշութիւն կալան գնա: Բոլոր ընդգիծադրութիւնք նորա անցան ի զուր, և ակամայ խոնարհէր զօրութեան նոցա: Սակայն իբրև նա զգաց զմերձաւորութիւն հնոցին, ընդգիծութիւն

նորա լաւելաւ մեծաւ զօրութեամբ: Նա եկն ի կատաղութիւն. խածատէր, խոցոտէր զվայրենի ընդդիմակալս իւր: Շլահաւնք նորա սլտոյտքէին սոսկալի իմն կերպիւ: Սրտմտութիւն և երկիւղ ցայն վայր կցեցին զջիզս երեսաց նորա, մինչ ալլանդակութիւն դիմաց բերէր զգարհուրանս և զսարսափ: Իսկ բերանն ահաւելի ծածկեալ լորձամբք զիզացելովք, ժայթքէր զանէծս և զհայհոյութիւնս ժահահոտս:

Այլ ամենայն մարդիկք, բայց ոչ դարբինքն խստասիրտք, տեղի տալոց էին կամաց նորա, տեսանելով զայսպիսի կալնումն և զմոլեզնութիւն վերագոյն: Բայց նոքա ծիծաղէին ի վերայ ունայն աշխատանաց նորա, որով կամէր թշուառն զուրկ կացուցանել զնոսա լըղձալի հաճութիւնէն, սր այնքան ախորժ էր նոցա: Յայնժամ նոքա, նորոգելով զսրտմտութիւն իւրեանց, կալան զոտս զսհին, և կոխելով զզլուխ նորա ի հրաբորբոք ծակն հնոցին, արկին զնա անդր, ուր նա կամէր տեսանել զատելին իւր զփրիզոլին:

Որ սերմանէ զքարիս, զհուննս քարեաց
ժողովեացէ.:

Թողցուք զայս դժոխային տեսարան. աշխատեսցուք ի մոռացօնս տալ զայսպիսի գարշելի արս սրպէս զՌօբերտն չար և դարձցուք կրկին առ բարին Ֆրիզպլին, որ աւարտեաց զպատարագն լեկեղեցւոջ: Սիրա նորա լի էր բազմատեսակ ուրախայի զգացողութեամբք, յորժամ նա ուղղեաց զճանապարհ իւր ի ձուլարանն: Գեռ ևս նա ոչ դադարէր, ստէպ կրկնելով ի միտս իւր զսովորականն իւր զմաղթանս, որ այնքան հաճելի էր նմա: Նա եհաս ի դարնոցն զկնի լրանալոյ սոսկայի դիպուածոյն: Տեսեալ նորա զերկուս մրտեալ դարբինս առ դրան ձուլարանին, եհարց զնոսա. — „Եղբարք, կատարեցի՞ք, զոր պատուիրեաց դուքսն.": Նոքա մուծին զպատանին ի ձուլարան, և ցուցանելով զկոյտ ինչ այրեցեալ օսկերց ի հնոցի անգ, պատասխանեցին լի բաւականութեամբ. — «ահա, ամենայն ինչ կատարեալ է ըստ կամաց տեսաւն մերոյ. յուսով եմք, թէ պարոն դուքսն զոհ լինելոց է զմէնջ»:

Փրիդոլին թէև ոչ բոլորովին հասու եղև բանից նոցա, սակայն և այսու պատասխանեալ փութաց առ տէրն իւր: Իբրև ետես զնա դուքսն ի հեռաստանէ, հազիւ թէ հաւատալը սչաց իւրոյ, թէ նա Փրիդոլին իցէ: Այնպէս թուէր նմա, թէ ուրուականն խղճուկ պատանւոյն հանգիման եկաց, առ ի անիծանել զբարբարոսականն նորա զանգթութիւն, ազգ առնել զվրէժիւնդրութիւն արդարութեանն Աստուծոյ: — «Ո՛վ խղճուկ» — կոչեաց նա իբրև գայլը, որոյ կարուսեալ իցէ խելամտութիւն — „Ուստի՞ գաս, զի՞նչ խնդրես»: „Ի ձուլարանէ, տէր իմ, — պատասխանի ետ Փրիդոլին հեզութեամբ: — „Չկարծեմ, որդեակ իմ, դու երևի անագանեցար ի ճանապարհին»... «Այո՛, ճշմարիտ է, տէր իմ, ես յամեցայ լեկեղեցւոջ, ուր աղօթս մատուցանէի, — պատասխանի ետ Փրիդոլին անկեղծութեամբ և լաւել ասել. — «Քանզի իբրև ես թողի զձեզ յառաւօտու, որպէս սովորութիւն իմս է, մտի ապա առ գքսուհին, գիտել՝ գուցէ ունիցի նա ևս ինչ հրամայել ինձ: Ներեցէք, առաքինի տէր իմ, գքսուհին հրամայեաց ինձ նախ մտա-

նել լեկեղեցի, և մատուցանել անդ աղօթս վասն որդեկին իւրոյ Տիւանգացելոյ: Ես կատարեցի զպատուէր դքսուհւոյն մեծաւ ուրախութեամբ և բաց ի սմանէ չորս անգամ աղօթս մատուցի վասն թանգագին առողջութեան ձերոյ:

Լուեալ դքսին զպատասխանիս պատանւոյն, ահ և զարմացումն կալան զնա. նա ալ ևս ոչ կարէր խօսել և կայր տպուցեալ, ամբոխմունք խառն մտածութեանց պաշարեալ էին զնա: Զայ Սրարչին նկատէր նա յայս գործ խորհրդաւոր, զայ, որ զողցես ի մեռելոց էած առաջի նորա զդատասպարտեալն: Իբրև նա փոքրինչ սթափեցաւ ի շփոթութենէ անտի, եհարց զպատանին. — „Զինչ պատասխանեցին քեզ դարբինքն“: Պատասխանի ետ Փրիդուին հեզութեամբ իմն — „Տէր իմ, յորժամ ես հարցի ցդարբինսն՝ կատարեցիք հրաման տեառն իմոյ, նոքա պատասխանի ետուն ինձ կարի մթին բանիւք, զոր ոչ իսպառ հասու եղէ: Նոքա մուծին զիս ի ձուլարանն, և ցուցանելով զկոյտ ինչ այրեցեալ ոսկերց, ասացին ծիծաղական զիմօք.

— „Ահա զգործն, զոր սլատուիրեալ էր մեզ սլա-
րոն գուքսն, կատարեցաք ամենայն ճշաու-
թեամբ, յուսով եմք, թէ տէրն քո և մեր ոչ
սակաւ գոհ լինելոց է զմէնջ„ — Իսկ Րօբերտ,
եհարց ասլա գուքսն խռովեալ ձայնիւ, մի թէ
ոչ հանդիպեցաւ քեզ, ես զնա ևս առաքեցի
յանտառն առ դարբինս„: „Ճէր իմ, ես չտեսի
զնա ոչ յանտառի և ոչ ի ձուլարանի անդ, և
ոչ զհետս ստից նորա նշմարեցի„: — Ինքն Աս-
տուած սլատեաց զնա ըստ գործոց իւրոց...
ասաց գուքսն ի յուզմունս խռովեալ կրից—
„Այժմ ես հասու եղէ„...

Գուքսն չկարաց զսպել զարտասուս իւր,
գրկեաց զՊրիդոլին հայրական քաղցրութեամբ,
զգուէր զսլատանին այնպիսի իմն ազգողագոյն
զգացողութեամբ, որ բնաւ անսովոր էր նմա:
Ասլա կալեալ զձեռանէ նորա և էած առ տիկինն
իւր: Գքսուհին յայնժամ կալր յուրախալի տրս-
մադրութեան սրտի իւրոյ, զի որդի իւր զգալր
կատարեալ առողջութիւն, և կարի անհամբե-
րութեամբ սպասէր սլատանւոյն առ ի յալստ

առնել զշնորհակութիւն իւր, և ասել, թէ որ-
պէս աղօթք նորա ընդունելի եղեն առաջի
սուրբ սեղանուն Աստուծոյ: Քանզի նա ի հա-
ւաստիս կայր, թէ Փրիդոլին ճշմարտութեամբ
կատարել ունէր զսլատուէր տիկնոջ իւրոյ:

Իսկ դուքսն, յաչս որոյ դեռ ևս շողային
կաթիլք ջերմ արտասուաց, ի մտատանջութեան
կայր, թէ որպէս ուղղեսցէ զչոնցանս իւր, զորմէ
մտածելն անգամ բերէր նմա սարսափ և զար-
հուրանս: Քանզի խորհէր նա, թէ առանց զգա-
լի ներգործութեան, ինքն մնալոց էր մեղա-
պարտ առաջի պատանուն, որ ամենայն անձ-
նագոհութեամբ նուիրեալ էր զանձն իւր ի
սպասաւորութիւն տան նորա, և զորոյ անմե-
ղութենէն երկմտէր նա ի ժամու մոլորութեան
իւրոյ: Ասաց նա, առաջի առնելով զպատանին
կնոջ իւրում, որում դեռ յայտնի չէին անցքն: —
„Անմեղութիւն սորա յայտնի եղև ինձ, դքսու-
հի, դա այժմ արժանի է սիրոյ մերոյ: Աստուած
և սուրբք նորա պահպանեցին զանմեղս զայս
և ամենայն նենգութիւնք չարագործին անցան

ունայն: Սկսեալ յօրէ յայսմանէ Փրիզովին չէ մեզ օտար ոք, և ոչ ես համարեմ զնա իբրև զծառայ, այլ նա սիրելի իմ է, և ի մէջ սորա և որդւոյ իմոյ բնաւ չիք խտրութիւն»:

Իբրև աւարտեաց դուքսն զբանն, կրկին և կրկին զրկելով և համբուրելով զՓրիզովին, յանձնեաց զնա կնոջ իւրում, և ինքն առանձնացաւ ի մենարանի իւրում առ ի հանգստանալոյ ի սաստիկ յուզմանց սրտին և տալ կամաց իւրոց խորհել ի վերայ արդարութեանն Ամենակալին, որով ամենայն ինչ կեան և կառավարին յօրէնս նախասահմանեալս ի յաւիտենից անտի:


Այս դէպք իսպառ փոխարկեաց զբնաւորութիւն դքսին, նա հրաժարեցաւ յորսորդութենէ և այլոց զուարճութեանց, որոց անձնատուր լեալն էր յառաջ: Եւ գտաներ այնուհետև զբաւականութիւն սրտին յառանձնութեան անդ ի մէջ ընտանեկան շրջանի: Զժամս պարապոյս, զազատս ի տնտեսական զբաղմանց, անցուցա-

ներ նա ի գրագարանի իւրում լինթերցումն
իմաստալից գրոց, որոց վսեմ խորհրդածութեամբ
յափշտակեալ լինէր երբեմն զգիշերն ի բուն:
Հետեանք այսպիսեաց քաղցր ճգանց եղեն այնք,
որք մուծին ի նմա ազնիւ մտածութիւնս, մեղ-
մեցին զխստաբարոյութիւն սրտի նորա և ներ-
շնչեցին ի նա գիտակցութիւն զԱստուծոյ և
զհրաշալեաց նորս:

Ի ուքսն այնուհետև ինքն անձամբ հոգ
տանէր կրթութեան որդւոց, որք սնեալ էին
յուսմունս օգտաւէտս, ի վարս առաքինականս
և կարի յոյժ ողջամիտ կանոնս չափաւորու-
թեան:

Փրիզովին, իբնէ ծնեալ գոյով ազնուաբա-
րոյ, երջանիկ եղև յոյժ. նա չէր այնուհետև
ծառայ, ալ մի ի սիրելի ընտանեկցաց Սա-
վերնսկի գերգաստանին: Սակայն նա ոչ իսպառ
մոռացաւ զվաղեմի պարտաւորութիւնս իւր, և
ոչ հպարտանայր բախտաւորութեամբն որ վի-
ճակեցաւ նմա: Ստէպ նա զմտաւ ածէր զնախ-

կին իւր զգրութիւն և զոհութեան փառս մա-
տուցանէր Բարձրելոյն վասն բարեւոքման նորա:
Իսկ զուքսն հայրաբար խրատէր զնա, խոր-
հուրդ տալով, մի հաւատալ բանից նենդամիտ
մարդկան, որք հրատուրեն զանմեզս և լարեն
առաջի նոցա որոգայթս: Պատուէր տայր ունկն
գնել բանից խորամանկին ամենայն անդորրու-
թեամբ, լսել զնոսս իբրև զլուր ինչ միայն
յափշտակող զմիտս մեր, և ոչ զիւրաւ հաւատս
ընծայել փաղաքշանաց կեղծաւորին, որ շույ՛
զինքնահաւանութիւն և ի մոլորութիւն ածէ
զմիամիտս: Առաւել ևս արժան է խորշիլ, որ-
պէս ի կարի յոյժ վտանգաւոր թշնամեաց, յա-
ռաջարկութենէ ընկերակցոց մերոց, որոց ան-
կեղծութիւնք դեռ չեն մեզ յայանի: Զի ընկերն
և մերձաւորն սուելի ևս փութով մատնեն զըն-
կերս ի կորուստ: Յամենայնի պարտ է զգաստ
լինել և արդարադատ, միշտ ի նկատի ունե-
լով, թէ վասն ամենայն յանցանաց համարս
տալոց եմք առաջի Երկնային Բառաւորին:



№	Թ. Կ.
31. Փորրադիր	15
32. Փ. Վարդ., Արեւելեան վիպալիսարի	20
33. Բաւական Լեզունս	20
34. Յ. Զազարեան Գիրք	15
35. Գալիսյ, Թարգմ. Ս. Հախումեանի	10
36. Արս-Մանեկա Եսկի Եռչոտմ Թարգ. Հ. նարեւեան	2
37. Բաֆֆի՝ Միւր այսպէս, միւր այնպէս	1 —
38. Պարսկական գրոյցներ վ. Փարսազեանց	5
39. Լեօ Վերթիս վերքեր ա. մաս.	30
40. Մրցումք հասարակութեան հետ	40
41. Լերսոնտով Գեւ Թարգ. Մ. Սադաթեան	30
42. Демонъ, Дормонтовъ	30
43. Վլադիմիր Թեդ, Լամարթին	30
44. Խոչրանդոտ, Ալֆօնս Գոզէ	50
45. Գիւնեգործի աղջիկը, վ. Փարսազեանի	15
46. Կնոջ կոչումը.	10
47. Նախընթաց օրը, Տարգմանեի	40

Պ Ա Տ Կ Ե Ր Ն Ե Ր

Ա. Պարոյր Հայրազն եւ Մովսէս Խորենացի	50
Բ. Ս. Սահակ եւ Մեսրոպ,	50
Գ. Զմեռ (օլիոգրաֆիս)	50
Դ. Մոզերի Խրիստոսոսթ.	3 —
Ե. Արշարյս	3 —
Զ. Յիսուս Եւաղիկի	3 —
Է. Անտոսկ որդին.	3 —

«Ազրիւր» եւ «Տարագի» 1892 թ. պրեմիաներ.

1. Փրիդօլին Երչեր, Ատոա, Բաֆֆի
2. Երս մայրը, վէս Է
3. Կորումբոս
4. Եւանգելիս

«Ազրիւրի» եւ «Տարագի»
ճանապարհածու

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0052671

[1p] 2

A $\frac{I}{13448}$